ընթացքով տարածւում էին հեռո՛ւ եւ հեռո՛ւ, մինչեւ այդ գետը խառնւում էր Եփրատի հետ: Տեղ-տեղ երեւում էին խիտ, ճոխ կերպով աճած, շամբուտներ: Այդ շամբուտների մէջ Տարօնի հին տէրերը, Սլկունի նախարարների իշխանազն որդիները, մի ժամանակ վարազներ էին որսում: Այդ որսորդ նախարարութիւնը Արշակունեաց առաջին թագաւոր Վաղարշակից կարգոեցաւ որպէս պետ թագաւորական որսերի: Տրդատի օրերում Սլկունիները ապստամբոեցան Արշակունիների դէմ, եւ ճենացի Մամգունի դաւաճանութեամբ բնաջինջ եղան: Տրդատը Տարօնը պարգեւեց Մամգունին, որը Մամիկոնեան մեծ նախարարութեան սկիզբը դրեց: Այդ բոլորը երազի նման անցնում էր իմ աչքի առջեւից: Կարծես, հէնց այդ րոպէում զարկում էր իմ ականջներին իշխանազն երիտասարդների որսորդական փողի ձայնը, կարծես, հէնց այդ րոպէում տեսնում էի, թէ ինչպէս նրանք, նիզակները ձեռքում, սրարշաւ ձիաներով, սլանում էին Մեղրի գետի խիտ շամբուտների մէջ: Բայց երբ աչքերս դարձնում էի, իմ առջեւում, յամրընթաց ձիու վրայ նստած, լուռ գնում էր կաթոլիկ կրօնաւորը...

Այդ կանաչազարդ տարածութեան վրայ, որ հասնում էր մինչեւ Եփրատի ափերը, արածում էին շրջակայ գիւղերի անասունները: Գիւղերը մօտ առ մօտ երեւում էին հեռոից:

Մի տեղ, ճանապարհից ոչ այնքան հեռու, մի խումբ երեխաներ նստած ինչ-որ խաղ էին խաղում: Այդ փոքրիկ հովիւների շուրջը արածում էին նրանց գառները: Երեւում էր, որ նրանցից իւրաքանչիւրը իրանց տան գառները բերել էր, եւ այնպէս կազմել էր մի ամբողջ հոտ: Շները գլուխները առջեւի թաթերի վրայ դրած, պառկել էին նրանց մօտ եւ ուշադրութեամբ նայում էին՝ ոչ այնքան գառներին, որքան րանց խաղին: Երբ փոքրիկ հովիւները հեռոից տեսան մեզ, նրանցից մէկը, աւելի ճարպիկը, շտապեց եւ, գրկելով գառներից մէկին, վազեց դէպի մեզ: Եւ ինչպէս հնձողը իւր հասկերի խուրձը նոիրեց մեզ, նա էլ իր գառը պահեց մեր առջեւ, ճանապարհի վրայ, եւ ծիծաղկոտ դէմքը ուղղեց դէպի մեզ: Կրօնաւորը սրտի յուզմունքից զգացոեցաւ, թաշկինակը տարաւ դէպի աչքերը:

— Մօտեցի՛ր, մանկիկս, — ասաց նա, տալով երեխային մի արծաթի դրամ եւ լի բուռնով այլ մետաղներ, որ հանեց գրպանից: — Այդ փողը քեզ, — աւելացրեց նա, — իսկ այդ միւսները բաժանիր քո ընկերներին:

Մանուկը համբուրեց կրօնաւորի աջը եւ ուրախ-ուրախ վազեց դէպի ընկերները: Նրա ստացածը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ, պղնձէ փոքրիկ խաչեր ս. Աստոածածնի պատկերներով: